

ԾԱՂԻԿ ՀԱՐԱԹՋ ԵՐԿՈՒ ԱՆ-
բամ կը հրատարակուի Զորեք-
շաբթի եւ Եարաթ օրերն : —
Տարեկան բաժանորդագրութեան
գինն է 100 դրուշ արծաթ : —
Վեցամսեայն 50 . — Գաւառաց
համար 115 դրուշ . — Վեցամ-
սեայ 60 . — Ծանուցման տողը
5 դրուշ :



Որ եւ է նամակ կամ գրութիւն
պէտք է ուղղել :
Աւ Արտօնատեր և Տնօրէն
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԵԱՆ
Էսկի Զապիկէ Ճառաեօօ
Նշան էֆ. Պերպերեանի Տղա-
բանն :
Խմբագրութեան յանձնուած
գրութիւնք եւ չեն տրուիր :

10 ՓԱՐԱ

Հ Ա Ն Դ Է Ս

ՓԱՐԱ 10



Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն

Զեկոյց.—Ազգային Տնտեսութիւն.—(Բանախո-
սութիւն քաղ. ժողովոյ Ազնուա. Ատենա
պետին).—Հարցում առ Մայր-Դիւան Ազգ.
ժողովոյ. Նկատողութիւններ Գաղափարան
Արամ.էֆ.ի մահուան առթիւ.—Ասկէ ան-
կէ.—Հայ լեզուի լայնութիւնը.—Տանկ մու-
հաբէմի սի.—Նորավէպ (Վիճակահանութեան
տունն).—Գատաս խորհուրդ.—Տիկին Բան-
դալուն (Վիպասանութիւն).—Ծանուցմունք:

Զ Ե Կ Ո Յ Ծ

Ծաղիկ յառաջիկայ շաբաթ օր չպի-
տի հրատարակուի Ս. Ծննդեան Ու.
Թօրէից տօնին պատճառաւ :

Այս առթիւ պարտիմք յայտնել թէ
Թերթիս Խմբագիրն եւս տիրոջ հա-
մաճարակի ազգած անհանգստութեան
ենթակայ լինելով՝ երկու շաբաթի չափ
չէ կրցած պէտք եղած խնամքը տա-
նիլ թէ խմբագրական յօդուածոց պատ-
րաստութեան և թէ սրբագրութեանց,
ոյր վասն ազնիւ Ընթերցողաց ներո-
ղաժտութիւնը կը խնդրենք :

ԱԶԳԱՅԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆ ԱՍՕՍՈՒԹԻՒՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ
ԱԶՆՈՒԱ. ԱՏԵՆԱՊԵՏԻՆ

Պաշտօնական օրեր պաշտօնական
ընդունելութեանց առթիւ՝ պաշտօնա-
կան անձանց արտասանած բանախո-

սութիւնք ի հարկէ մեծ կշիռ ունին
և կ'արժեն խորին ուշադրութիւն, ե-
թէ մանաւանդ այդ բանախօսութիւնք
միայն Աստուծոյ խօսքեր չեն :

Այս կարգէն է Ս. Ծննդեան Տօնի
չնորձաւորութեան առթիւ ի ներկա-
յութեան բարձրաստիճան եկեղեցա-
կան Հարց. Երեսփոխանաց և այլ ազ-
գային պաշտօնական անձանց մեր Ազգ.
Վարչութեան Բաղ. ժողովոյ Ատենա-
պետ Ազնուա. Սահակ էֆէնտի Վաղա-
րուեանի իւր ազնիւ պաշտօնակցաց
կողմէ արտասանած ուշադրաւ և շատ
անկեղծ ոգևով արտասանած բանա-
խօսութիւնը, որ մեր Ազգային վիճա-
կի, պիտոյից և անմեղ ըզձից վրայ
պարզ, ամփօփ և իմաստալից տեսու-
թիւն մը իւր—Բաղ. ժողովոյ—ոգ-
ւոյն և ուղղութեան յայտարարն ըլ-
լալով կ'արժէ որ զայն օրինակենք
աստ :

«Վմեն. Ս. Պատրիարք Հայր .

Ազգ. Կեդր. Վարչութեան Բաղ.
ժողովն Տեառն մերոյ Ս. Ծննդեան տօ-
նին առթիւ, օրդիական խորին ակնա-
ծանօք, կը փութայ իւր շնորձաւորու-
թեանց հետ մաղթել երկար կեանք
Ձեր Բարձր Սրբազնութեան և բարե-
լաւութեան իւր սիրեցեալ Ազգի վի-
ճակին :

Ոյն բարեպատեհ առթիւ, Բաղ.
ժողովն աւագ պարտականութիւն կը
համարի հրապարակաւ իւր երախ-
տաղխութիւնն յայտնել առ Ձերդ

Բարձր Սրբազնութիւն այն անխոնջ
լանից համար, զորս անձանձիւր նուի-
րեցիք ազգային դորձոց ընթացից
բարւոյքման, այն հայրական հոգա-
ծութեան համար, որով խնամեցիք
խեղճերն ու թշուառներն, և որ մե-
ծագոյնն է այն աննկուն հաստատա-
մտութեան համար, որով ջանադիր
եղաք պաշտպանել ազգային ամեն ի-
րաւունք և հաստատութիւն :

Արդարեւ, Բարձրաշնորհ Տէր,
Ձեր ամեն ջանքեր չպսակուեցան և
վերջնական կարգադրութեան կարօտ
գաւառական ներքին և յարաբերա-
կան խնդիրք կան. ահայն վստահ
եմք որ շնորհիւ մեր Օգոստ. և հայ-
րախնամ Կայսեր և իւր բարձր նախա-
բարաց արգարաբիրութեան, մօտաւոր
ապագայի մէջ պիտի իրականանան
Ձեր ու Ազգին ջերմ իղձերը :

Առ այս խնդրեմք, Բարձրաշնորհ
Ս. Հայր, որ անվհատ և յուսալից հա-
ճիք շարունակել Ձեր աշխատութիւն-
քնն և մատուցանել յոտս կայս. Գա-
հոյից Ձեր հօտին ցաւերն ու պիտոյքն
և նոցա դարմանը խնդրել :

Աներկբայ եմք որ լսելի պիտի
լինին ձեր խնդրուածքն և առ Օսմ-
փառապանձ Գահ իւր բազմադարեան
հաւատարիմ հպատակութեամբ բարե-
բաղդ գտնուող Հայ—Ազգն պիտի
օրհնէ միշտ զվեհ անուն իւր սիրելի
խնքնակալին և գոչէ սրտագին

Կեցցէ՛ Օգոստ. Կայսրն մեր Սուլ-
թան Համիտ Խան

Կեցցէ՛ Բարձր Տ. Տ. Խորէն Ս. Պատրիարք:

Քաղ. ժողովոյ Ազնուա. Ատենապետ Էֆէնտիին սոյն մեծարժեք բանախօսութիւն սա պարագայն եւս ի վեր կը հանէ թէ Ամեն. Տ. Խորէն Ս. Պատրիարքի և վարչական ժողովոց միջեւ, աղգային գործոց բարւոքման մասին, կատարեալ համերայխութիւն կը տիրէ և թէ ն. Ամենապատուութիւն չթերանար բնաւ այն պարտականութեանց մէջ, զորս կը գծեն Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ նուիրական իրաւունքներն և Ազգին կենսական շահերը:

Կը հետեւի ուրեմն թէ գէթ առ այժմ չկայ պատրիարքական խնդիր և անշուշտ չպիտի կենայ, ցորչափ վայելէ մեր Ս. Պատրիարքը Ազգին վստահութիւնը և ընդհանրութեան սէրն ու համակրանքը:

ՀԱՐՑՈՒՄ

ԱՌ ՄԱՅՐ-ԴԻՒԱՆ ԱԶԳ. ԺՈՂՈՎՈՅ

Ազգ. ժողովոյ Մայր-Դիւանն յազգային լրագիրս իւր հրատարակած պաշտօնական յայտարարութեամբն — յորում մասնակցութիւն ունեցած չէ Ազնուա. Տօքթ. Թիրեաքեան Էֆ. իւր վերջին հիւանդութեան պատճառաւ — կը հրաւիրէր զԱզգ. Երեսփոխանըս, վարչութեան անդամս, զՏեսուչ և զԹաղ. Խորհուրդս և զԿրթական ընկերութիւնս և զայլ պաշտօնական մարմինս Ս. Ծննդեան երկրորդ օրը ժամը 7ին ներկայ գտնուիլ ի Պատրիարքարան Գոթ-Գառնի, առաջնորդութեամբ Մայր-Դիւանի ներկայանալու համար ն. Բարձր Սրբազնութեան ի շնորհաւորութիւն Նոր Տարւոյ և Ս. Ծննդեան:

Այդ «Դում-գափու» բառը, որ կայ նոյն Պաշտօնական Յայտարարութեան մէջ, գրաւած ըլլալով մեր ուշադրութիւնը, պարտք համարեցանք հարցընել առ Մայր-Դիւանն Ազգ. ժողովոյ թէ՛ Հայ-Ազգն ի մայրաքաղաքիս արդեօք քանի՞ Պատրիարքարան ունի:

Եթէ մէկէ աւելի է, կը խնդրենք որ հաճի նոյն Դիւանը դարձեալ երկտող Պաշտօնական Յայտարարութեամբ մը ազգ առնել թէ միւս Պատրիարքարանք ո՞ւր կը գտնուին:

Սակայն մենք լրջութիւնը ձեռք

առնելով կ'ըսենք՝ ի Պատրիարքարան Գոթ-Գառնի բացատրութիւնն օտար յարանուանութեան վերաբերող պաշտօնական մարմնոյ մը կողմէ եթէ գործածուէր, ոչ այնքան ծիծաղելի պիտի համարուէր և ոչ պարսաւելի, բայց այսքան անուշադրութիւն Ազգ. ժողովոյ Մայր-Դիւանի կողմէ ի հարկէ բնաւ ներելի չէ, և անշուշտ մեծ պակասութիւն է նոյնպիսի վիրաւորիչ բացատրութիւն մը, ոյր վրայ կը հրաւիրենք Ազգ. ժողովոյ Ա. Ատենապետ Ազնուա. Տօքթ. Թիրեաքեան Էֆէնտիի ուշադրութիւնը, ինչպէս նաեւ Ազգ. Երեսփոխան Տեարց, որ պարտին լաւ կ'աւել իրենց քուէի արժէքը և գիտակցութիւն ունենալ թէ Դիւանի անդամոց ընտրութեան համար ինչ կարգի անձանց պարտին տալ իւրեանց քուէները:

Աւելորդ է յայտնել թէ մեր այս դիտողութիւն նպատակ ունի միայն ազգային արժանապատուութիւնը, զոր ամեն Հայ պարտի ամենայն նկատումէ շատ բարձր պահել:

ՆԿԱՏՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԳԱՅԱՑՅԱՆ ԱՐԱՄ ԷՏ. Ի ՄԱՀՈՒՄՆ ԱՌԹԻՒ

Ողբացեալ Արամ Էֆէնտի Գաֆաֆեանի կեանքը, զորմէ մի քանի տեղեկութիւններ հրատարակեցինք Մաղիկի նախորդ թուով, առիթ կ'ընծայէ մեզ ինչ ինչ դիտողութիւններ և բազգատութիւններ ընելու նկատմամբ հին ամիրայից դաւկներու և արդի երիտասարդութեան:

Ի դէպ է աստ յիշել Կէօչեան վսեմ. Յակօբ Էֆէնտիի սա հարցումը, զոր կ'ընէր մեզ աստի իբր 7-8 տարի առաջ, թէ բարդաւած գերդաստանի մը փայլուն դիրքն և շողջողուն համբաւը ինչո՞ւ հարիւրաւոր տարիներ չեն տեւեր և կը տեւեն առ առաւելն միայն իբր 20-30 տարի:

Այս հետաքրքրական և յոյժ չահեկան հարցի պատասխանը հրատարակեցինք նոյն ատեն Լոյսի մէջ:

Վարժէ որ այժմ անդրադառնանք ի նոյն:

Հին ամիրայից ժամանակի դաստիարակութեան — եթէ երբէք կրնայ դաստիարակութիւն կոչուիլ — ուղղութիւնն էր շփացածութիւն, անձնա-

հաճութիւն և ամբարտաւանութիւն,

Թէպէտ բարեպաշտի համբաւ կը վայելէին ամիրայք, բայց այդ բան հիմեայ չէր քրիստոնէական կրօնի վսեմ բարոյականին և նորա գեղեցիկ իմաստասիրութեան վրայ, այլ կրաւորական հետեւողութիւն էր միայն և արդիւնք ժամանակին փառամոլութեան:

Իւրեանց քաղաքային հաւատն ու դաւանանքն այն էր թէ նա որ «Դրոյ Վ. Ժորջ Վ. Թէպէտեւ իրենք իրենց մէջ բոլորովին անմիաբան էին, իրարու շատ հակառակ, սաստիկ նախանձոտ և իւրեանց մեծագոյն հաճոյից գոհացումն և անարգ փառամոլութեան յաղթանակը կը կայանար զիրար կործանելու և զգետնելու մէջ:

Այս նկարագիր, որ շատ ճիշդ է դժբաղդաբար, նպատակ չունի ամիրայից պատմական ժամանակամիջոցը արհամարհելի ընծայելու յաշս արդի սերնդեան, այլ պարզելու այն խիստ անհաճոյ հետեւանքներ, որոց անմիջական աղղեցութեան ներքեւ փչրեցաւ ու խորտակեցաւ այն Ամիրայութիւն, որ կրնար տակաւին շատ երկար ժամանակ կանգուն կենալ և տիրել դրամական հրապարակին, եթէ բոլորովին տարբեր դաստիարակութիւն ընդունէր. և եթէ տարբեր ուղղութեան հետեւէր, և իւրեանց գործունէութեան ասպարէզը չլինէր սահմանափակ և իւրեանց դաւակներ ընէին գործի մարդ:

Տեղը չէ աստ Ամիրայութեան ժամանակի պատմութիւնն ընել, որ հարկաւ առանձին երկասիրութիւն մը կը կազմէ, և խոստովանելի է զի ամիրայից մէջ գտնուեր են անձինք որ հանրային բարեգործութեամբ խիստ թանկագին և յարգելի յիշատակներ թողած են, բայց այդ կարգի ամիրայից անուններ մատի վրայ կը համրուին, զորօրինակ՝ Ազգային անմահ Բարերար Պէզհեան Գարութիւն, Տատեան Յովհաննէս, Տատեան Պողոս, Սէրվէրեան Յովհաննէս և Պալեան կարպետ ամիրայք, իսկ մնացելոց մէջ հազիւ կը յիշուին անձնաւորութիւնք, որ յիշատակաց արժանի գործեր ունենան և իւրեանց սերունդք գէթ 30 տարիէ աւելի ժառանգած լինին նոյն փայլուն դիրքն և շողջողուն համբաւ,

մինչդեռ ընդհանրապէս կը յիշուին բազմաթիւ ամիրայից զաւակներ և թոռներ, որ մուրալու վիճակի հասած են դժբաղդարար:

Սոյն տխուր պարագայք մեզ կը ներշնչեն սա խորհրդածութիւն թէ՛ բուն ազնուականութիւնը տոհմային չէ, և շատ անիմաստ ու ծիծաղելի է եթէ ոք կը պարծենայ իւր նախնեաց ազնուականութեամբը, մինչդեռ այդ բան իրմով վերջանայ:

Ճշմարիտ ազնուականութիւնն յայնմ է, որ կ'սկսի իրմով և այն հիման վրայ կը տեւէ յորդուց որդի հարիւրաւոր տարիներ:

Այս կարգէն է Գափափեան բարեհամբաւ Գերդաստանն, որոյ մեծանունն Պետն՝ Ազնուա. Յովսէփ էֆ. — որ իր գործոցը զաւակն եղած է և ինքնօգնութեամբ միայն յառաջացեալ — շատ զօրաւոր և օրինակելի հիման վրայ հաստատած է իւր հսկայական ձեռնարկութիւնը, և մասնաւոր ինամով կրթած ու պատրաստած էր իր միակ որդին՝ ողբացեալն Արամ էֆէնտի Գափափեան, որոյ ստացած դաստիարակութիւնն առ հասարակ ամիրայից զաւակներու ընդունած դաստիարակութեան նման շիպացածութիւն, անձնահաճութիւն և ամբարտաւանութիւն չէր, այլ ճշմարիտ դաստիարակութիւն, որոյ առանցքն էին ժրջանութիւն, գործունէութիւն, յարատեւ աշխատութիւն և աճեցուն յառաջադիմութիւն:

Աւա՛ղ սակայն որ այդ հանճարոյ անձնաւորութիւնն այօօր ոչ եւս է:

Բայց միթէ կարելի՞ ըսել թէ ողբացեալ Արամ էֆէնտի Գափափեանի հետ մարելու սահմանուեցաւ նաեւ Գափափեան անունը:

Վարկեան մ'իսկ ներելի չէ այդպէս մտածել, վասն զի եթէ Երկինք շատ կանուխ խամբեցին նորա կեանքն պատուական, բայց ինք կենդանի է իւր գործերով իւր օրինակելի արարքներով իւր վսեմ խորհուրդներով, զազափարներով, յարատեւ աշխատութեամբը. փութաջան գործունէութեամբն և ազգասիրական ու ողորմասիրական զգացմամբքն, զորս իրեն ներշնչած էր Հայրն Գափափեան — մեծանունն Պետն Գափափեան բարեհամբաւ Գերդաստանին՝ Ազնուա. Յովսէփ էֆէնտի Գափափեան — և այդ ազնիւ յատկու-

թիւններէ մեծ մասամբ ժառանգած են այն հարիւրաւոր գործաւորներ, որ իւր — Ազնուա. Յովսէփ էֆէնտի Գափափեանի — զաւակներն են, զի իրմով ուսան այն պատուական արհեստն, ոյր շնորհիւ կ'արին նաեւ հարիւրաւոր ընտանիքներ, որ իր մեծ միթաւութիւնքն են և որք անմահ պիտի գործեն զիւր և ողբացեալ Արամ էֆէնտի անունն և գարուց ի դարս օրհնութեամբ պիտի յիշուի Գափափեան Գերդաստանը:

Գափափեան Յովսէփ էֆէնտի մինչեւ ցարդ Հայրն էր միայն ողբացեալ Արամ էֆէնտի Գափափեանի, բայց յետ այսորիկ Հայրը պիտի լինի հարիւրաւոր գործաւորաց:

Վշտահար Յովսէփ էֆէնտի Գափափեանի համար քան զայս ինչ մեծ միթաւորութիւն, զոր դարձեալ երկինք կը շնորհեն իրեն, և այս բան շատերու տրուած չէ:

Մեծ կ'ըսենք, և իրաւամբ, վասն զի մեծ օրհնութիւն է սրբել բաղմաթիւ ընտանեաց արտասուքը. ջամբել նոցա արհեստ, հաց և ապագայ:


Ուրեմն, անմիթար չէ Յովսէփ էֆէնտի Գափափեան, որ հայրն է հասարակաց և ժողովրդեան ամիրայ:

Մաղթելի է որպէս զի այսպիսեաց թիւն աւելնայ յօգուտ բազմակարօտ Հայ-Ազգին:

Կարի միթարական է տեսնել թէ պերճ գասն այց իւրեանց զաւակներ գործի մարդ ընելու մասին չհետեւիր հին ամիրայից ուղղութեան, այլ կը հետեւի մի գործնական ուղղութեան, որոյ գովելի օրինակները կ'երեւին:

ՊԱՏՈՒԱՆՇԱՆ

Գոհութեամբ կը ծանուցանենք թէ Վեհ. Սուլթանը բարեհաճեցաւ Գ. կարգի Մէճիտիյէ պատուանշան շնորհել Գըրճեան Ազնուաշուք Գէորգ էֆէնտիի, որ Ղալաթիոյ Պորայի վարչութեան անդամ է, և ծանօթ իւր ազգասիրութեամբը:



Ընթրեաց ատեն գարեջուր կը բերուի:
Տիկին Ս. խօսքը ամուսնոյն ուղղելով կը գանգատի թէ՛ գարեջուրը

գլխուն կը զարնէ և աչքերը չեն տեսներ:

Փոքրիկ Պետրոս, որուն պնակը տակաւին լեցուն էր, զուարթութեամբ կըսէ՝ «մայրիկ, կերակուրս կերայ լըմնցուցի»:

Ո՛չ, կը պատասխանէ մայրը, դեռ կեցած է, շուտ ըրէ լմնցուր:

— Հա՛, հա՛, կը կարծէի թէ, մայրիկ, կըսէ, աչքերդ չեն տեսներ:

* * *

Դժուարահաւան մուրացիկ մը, Բարեպաշտ անցորդ մը հինգնոց մը կուտայ մուրացկանի մը:

Ենորհակալ եմ ձեր բարեսրտութենէն, կըսէ, դրամը ետ տալով և կը յարէ. հիմա 5 փարանոց չեմ առնեմ, մուրացկանութեան նոր սկսած ատենս միայն կ'առնէի:

* * *

Ջուկէն գանգատող հայր մը: Պարոն Գ. կը գանգատի իր վաղեմի բարեկամներէն մէկուն իր տղուն անկարգ վարմանը մասին,

Պէտք է որ, կը պատասխանէ բարեկամը, զինքը յանդիմանէք սաստիկ կերպով:

Ո՛հ, ինչ որ ըսելու ըլլամ խեղճներ, միայն անմիտներուն խօսքը մտիկ կ'ընէ, կ'աղաչեմ, դուք խօսեցէք հետը:

* * *

Անասուն նուաճողի մը կարծիքը, (Կրանվիլի ծովեզերաց վրայ գըտնուող ալպոմէ մը քաղուած):
Անանոց հետ ապրելու վարժուելով մարդ արարածոց ներողամիտ եղած եմ:

Անասուն նուաճողի մը

Եւ անմիջապէս ներքեւը գրուած է՝ Մարդոց հետ ապրելու վարժուելով՝ անամոց ներողամիտ եղած եմ:
Սորոսէրսօթիւն. — Կն իջ

ՀԱՅ ԼԵՆԶՈՒԻ ԼԱՓԻՒՐԻՆԹՈՍ

Անցեալ օր մեր գրասենեակը՝ ձեռքը նամակով երիտասարդ մը մեզ ներկայացաւ:

— Միւսիւ Մալիկ սի՛ղմիսինիզ:
— Էվվէթ,
— Բառտօն էֆէնտիմ, շու մէքթուպ սիզին տիր:

Աթոռ մը ցոյց տալով հրամանեցք, նստեցէք ընդս :

— Հայրը . մէնսի միւսիւ , եալընըզ չունու օգուլուն . վէ պիր ուէրօնս հիմ- մէթ իտին , զիրա ալըը սոյ բրէսէիմ , օթուրամամ . Պիր տօստուճու օպլիթէ իթմէք իչիւն պու գատարճըզ պիր սաքուիֆիս անճագ իտէպիլմիչիմ :

— Սինեօուին խօսքերէն բան մը չը հասկցուելով նամակը կարգացինք , որուն ահա պատճենը :

... էֆէնտի .

Հէմ թոհաֆ , հէմ հիքմէթլու պիր խուսուս հագգընտա պու ագչամ խա- նէմիզտէ թէքլիֆսիզճէ պիր ճէմիլէ- թիմիզ վագը օլանճաղընա մէպնի , զաթընըզ տաիի միւճէրէտ թէչրիֆէ բաղպէթ պուլուրմալէրի խասսէթէն թէմէննի օլունուր էֆէնտիմ :

Յունվ. 2 1890 Փէրիտիէ

— Կը ներէք պարոն , ստիպողա ...

— Աթանտէ' , պէնտէնիզ խայճա պիլմէմ , աֆ իտէրօսիիզ . իֆատէնիզի թիւրքճէ օլարագ իտէպիլմիչիմ :

— Բէճա իտէրիմ , մազուր պուլուր- սունլար , պու ախչամ կէլէմէմ , էկէր սիզէ պիր կիւճիւք օլուր իսէ չիֆաէն իֆատէ իթմէք , տէրագապ իքի սըրա պիր ճէվապ եալալըմ իզնիսիզ օլուր- սա :

— Հայրը էֆէնտիմ , ուրֆիւ օլարագ ճէվապընըզ նէ թահրիբ իլէ վէ նէ չիֆաէն թէպլիզ իտէպիլմիչիմ . սէօզ վէրմէլիսիիզ սան ֆօթ :

— Օթուրամայաճագ գատար վագ- թիսիզ օլմատըը հալտէ' տուրուպ պիզէ մէրամ ալնաթմագ սիզէ հէմ կիւճ վէ հէմ թէհի պիր զահմէթ օլ- մագտան իպարէթ տիր :

— Միւսիւ , նիչիւն , պու ատէթա պիզէ պիր աֆուճթ օլտու :

— Իչինիզտէն գալմայասընըզ տէմէք իսթէրիմ , պէնտէնիզ ճէվապըմը վէր- միչիմ :

— Էմբօսիպը էֆէնտիմ , հիչ պիր վագրթ գապուլ էթմէմ , բառօլունու- զը ալմատըգճագ' շունտան շուրայա կիթմէմ , ամմա իչիմտէն գալըր բմը- շըմ , սանֆէռիլէն , պու տա պիր սէռ- վիս տիր :

— Պէօլլէճէ ճէպրէն օլտուզու հալ- տէ սէօզ վէրմէքտէն պաչգա շարէ եօզ , անլաշըլտը , է'հ բէք էյի պաչ իւստիւնէ :

— Եաչա' , վիվ Մաղիկ , կեցցէ' , ա- տիեօ' էֆէնտիմ , օ ուրվուսա :

— Ատիեօ :

— Ռանտէվուեու պիլմիչիմիզ եա' . Փէրիտիէ նէսրա' :

— Պիլաիմ էֆէնտիմ :

— Տօնկ , ատիեօ' , էյվալլահ :

— Ուզուրլար օլտուն :

Հիմայ այս անձին երեսին չըսած . նիս եթէ ետեւէն խօսինք' մարդկու- թեան դէմ է , անոր համար կը լռենք : Բայց ընթերցողաց ուշադրութիւնը միայն սա' կէտին վրայ հրաւիրելով այսչտփ միտին կըսենք թէ' Հայ լեզուն ո'ւր տեղուանք ինկած է . մինչեւ ա- նոր անուամը պարծենալու ճիգ թա- փողներու . քով իսկ , սակայն առաւել վա'յ մարդոյն այնմիկ , ոյր ձեռն մուճ- ուած է այս ամենայն օտարութիւն :

(Տէլաֆ)

ՏԱՆԿ ՍՈՒՋԱՔԵՄԵՍԻ

(219 նիւմէրօտան պագըլէ)

Բէիս .— (Տավաճըլարա խիթապէն) սիզին իֆատաթընըզ նէ տիր :

Տավաճըլարա պիրի .— էֆէնտիմ , ֆէլաքէթիմին սէպէպի պու ատամ տըր . Ալլահ իչին պիր տէֆա եիւզիւնէ պագընըզ . ինսան պու սիմայը կէօրիւր տէ տէհչէթիստէն գըրգ եըլ թիթրէ- մէզ մի . Եաթաղըմտա եաթարքէն , պիլիմ էվէ կիրմիչ . օն կիւնտէն պէրի պէնի պու հալէ կէթիրաի . թապ ու թագալթըմ գալմատը . տէնէքսիզ իիւ- րիւլէմէյօրուճ :

Ինֆուլէնցանըն Ավօգաթը .— էֆէն- տիմ , եաթաղըմտա եաթարքէն պի- զիմ էվէ կիրտի տէյօր . կէօրէն վա'ր մը . էվէ կիրմիչ օլտըզընըն էմարէսի նէ տիր :

Տավաճը .— (Պիր հէքիմ կէօսթէրէ- րէք .) իչթէ էֆէնտիմ , կիրտիլինի պու զաթ կէօրտիւ , վիւճուտիսի պու քէչֆ իթաի , էվէ կիրմիչ օլտըզընըն էմարէսի իսէ' պէնտէն պաչգա խանէտէ պու- լունանլարըն ճիւմլէսիսին տէ խաս- թալանմըշ օլմատը աըր :

Բէիս .— (հէքիմէ խիթապէն) Պու ատէմին տավաճընըն խանէսինէ կիր- տիլինի սիզ կէօրտիւնիւզ միւ . կէօր- տիւլիւնիւզէ շահատէթ իտէճէ' քմի- սինիզ :

Հէքիմ .— էվվէթ , իտէճէլիմ :

Բէիս .— Պագ , օրատա ինճիլի Շէրիֆ վար տըր . տօղրու սէօլլէյէճէլինէ վալ- լահի' մի :

Հէքիմ .— Աալլահի .

Բէիս .— Բէք էյի . սէօլլէյինիզ պա- գալըմ , նա'սըլ կիրտի :

Հէքիմ .— էֆէնտիմ , հէր եէրէ նա- սըլ կիրէրսէ պուրայատա էօլլէ կիր- տի . Պու ատամ էօլլէ հէր քէսին պիւ- տիլի խըրըզլարտան տէլիլ տիր . Մէ- հարէթ վէ ուսթալըղընա հէր քէս հարէթտէ գալըյօր : Պիր խանէյէ կիր- տիլի կէօզ իլէ կէօրիւլմէյօրսատա , ասար վէ ալաիմի միւթէատտիտէ' կիրմիչ օլտըզընը իսպաթ իտիյօրլար : Պաչըճա շալտըղը շէյ' ինսանըն սըհ . հէթ վէ աֆիլիթի տիր . Տիւչիւնիւ- նիւզ պիր քէրրէ , բէիս էֆէնտի հազ- րէթլէրի . սըհհէթտէն տահա գըլ- մէթտար պիր մաթա օլապիլի'ր մի : Իչթէ պու ատամ անը զասպ ու սըր- գաթ իտիյօր . պէն տավաճընընըն խա- նէսինէ վագթըլլա կիրտիպ տէ լազըմ' կէլէն իլաճլարա քէնտիսինէ վէ սաիթ ֆամիլեաթ էֆրատընա եարտիմ իթմէ- միչ օլսայըլարմ , պու ինֆուլէնցա' օ- րատան տըչարը չըգմայաճագտը . պի- շարէլէրէ քիմ պիլիթ տահա նէ' գա- տար էլիլիթ վէ սըգընթը վէրէճէք իտի :

Բէիս .— (Տիկէր պիր տավաճըլա) Օէնին իֆատէ'ն նէ տիր :

Տավաճը .— (Պիր միւտտէթ էօք- սիւրէրէք .) Պագընըզ , էֆէնտիմ , պա- գընըզ . պիւթիւն թէնէֆիլուս պօրու- լարըմ իւֆինէթ իչինտէ գալմըշ (Թէք- րար էօքսիւրէրէք) Լագըրտը սէօլլէ- մէյէ մէյտան պուլամայօրըմ ուլգուճ եօզ , բահաթ հիչ եօզ , էվտէ սապա- հա գատար էօք' իւրիւքտէն տուրա- մայօրըմ . (Թէքրար էօքսիւրէրէք) Պէշ նէֆէր շօճուզըմ եաթագլարտա եա- թարագ , ավազլարը օլտուգճա պաղը- ըրյօրլար . զէվճէմ այագ իւզէրիստէ անճագ պին զահմէթլէ պիզէ պագա պիլիյօր . (Թէքրար էօքսիւրէրէք .) հալ պու քի անըն տա պէլի գօրաճագ- մըշ կիպի աղըլյօր . տօղրուսը , պիրտէն պիրէ իւզէրիմիզէ հիւճիւմ իտէն պու տիւլմէնին քի'մ օլտըզընը պիլլէմէտիք . (Թէքրար էօքսիւրէրէք) Էրպապընը շաղըրտըզ . Պագտըք . ինֆուլէնցա իս- մինտէ պէլիսիզ պիր ատէմին պիզի

պու հալէ կէթիրմիչ օլտըղընը սէօյլէ-տի (թէքրար էօքսիւրէրէք.) Սծնրա ղաղէթատա օգուտում քի, պու ինֆլուէնցա թութըլըչ, մուհաքէմէ իտիլէճէք իմիչ, հէման հուգուգը շախսիյ-եէմի (թէքրար էօքսիւրէրէք.) մուհա ֆաղա իչիւն մէրծիինէ պիր արգուհալ վէրտիմ: պու ատամ պէնի օն պէչ կիւն իշտէն կիւճտէն ալը գօյտու կիւնտէ օն ֆրանքտան եիւզ էլլի ֆրանք զարար վէ ղիյան տավա իտէրիմ. իլաճ բարալարը տա պաչգա:

Րէիս.—Նէ՛ տէյէճէքսին, ինֆլուէնցա:

Ինֆ —էֆէնտիմ. նէ՛ տէյէճէյիմ. պունլար հէք հէքիմէրին ղիւլմէրի տիր. պիր եերէ շաղըլըպ կիտիօրյար, ազաճըգ նէզլէ կէօրտիւլէ՛ր մի, խալ-գը գօրգութմաղա վէ բարա չէքմէյէ մէյտան պուլմագ իչին «Սէնի ինֆլուէնցա թութմըչ» տէյիպ պիչարէլէրի օն օն պէչ կիւն իչլէրինտէն կիւճէ-րինտէն ալըգօյրլար: Պէնիմ եիւզիւմ, տէն բարա չէքմէք արգուսընտա պու-լունան հէքիմէրին շահատէթլէրի գա-նուն նազարընտա մագպուլ ատտ ի-տիլիքսէ, էվրօքանըն պու ատալէթինէ տօղրուսըթէաճճիւպ իթմէքտէն պաչ-գա պիր շէյ տէնիլէմէզ: Հէքիմէր պէ-նիմ եիւզիւմտէն իսթիֆատէ իտէճէք-լէրի ճիհէթլէ, պիրճէրտէ պուլունմա-սամ պիլէ, վարքմ տէյու խալգը ալ-տաթմագտան կէրի տուրմաղար. հէ-քիմէրտէն շու իսթիֆատէ արգուսը, էհալիտէն տէ պիր թագըմ պաթըլ ի-թիգատար չըգարըլըն. պագալըմ օր-թատա ինֆլուէնցա, կուէէ, Տանչ կիպի խասթալըգլարտան էսէք գալըլ մը:

Սամիիտէն պիր գաչ քիչի—Ս՛յ, աման, աման, աման, պաչըմըգ պէ-լիմիզ, պաճագլարըմըգ սըրթըմըգ աղ-ըլօր. Ալլահ իչին օլտուն պիր եօլ ա-չըն տա շուրատան տըշարը չըգալըմ պիզի տէ ինֆլուէնցա թութու: Րէիս էֆէնտի հազրէթլէրի, պու կէօզ կէօրէ ճիւրմ տիւր. արթըգ ինքեարը գա-պիլ օլամագ. պիր տէֆա հալիմիզէ պգաըն:

Րէիս.— Մուհաքէմէնին հիւսնիւ ճէրէյանընա խալէլ կէթիրիօրսընըգ: Տըշարը չըգըն, Սիզին տէ ինֆլուէնցա-տան պիր արայաճաղընըգ վար ըսա, մէրճիի մախուսընա միւրաճաթ ի-տին:

Պունտան սօնրա, պիր գաչ տավա-ճընըն տահա իֆատէսի տիյնէնտի: Շահիտլէրտէն վէ Բարիս էնճիւմէնի թըպպիսի (բժշկական ակադեմիա) ա-զասընտան եէտի սէքիզքիչի տէ եէմին իթտիքտէն սօնրա, պու կիւն մուհա-քէմէտէ հազըր պուլընան ինֆլուէն-ցալը բէք չօգ եէրլէրտէ կէօրիւպ թա-նըմըչ օլտըգլարընը վէ պիր չօգ խալգը եաթաղա տիւլիւրէն վէ պիր չօգլա-րընը տախի մէզարա սէվգ իտէն ղատ-տարըն: միւթթէհիմ սանտալիէսինտէ պուլունան շախսը պէտչէհրէ օլտըղը-նը սէօյլէտիլէր: Վէլ հասըլ՝ մահքէ-մէճէ արթըգ տիյնէնէճէք պիր շահիտ, պիր տավաճը գալմատըղընտան, միւտ-տաիի ումուլի այաղա գալգըպ պէր վէճէի աթի սէօզէ պաչլատը

—Րէիս էֆէնտի հազրէթլէրի, տիյ-նէնէն շահիտլէր իլէ տավաճըլարըն ի ֆատաթը վէ մէմալիքի էճնէպիյէտէն քէչիտէ իտիլիչ օյան թէլէկրաֆնա-մէլէրին միւնտէրիճաթը ինֆլուէնցա-նըն պիր չօգ մէմալիքտէ կուէէ կիպի, Տանչ կիպի նամլար ալթընտա տիւրլիւ տիւրլիւ ֆէնալըգլար իճրա իտէրէք հէր եէրտէ ումուլըն սըհհէթիինի սըր-գաթ վէ բէք չօգ ատամլարըն տա թէլէֆինէ սէպէպ օլմագ սուրէթիլլէ իրթիքեապը ճինայէթ իթմիչ օլտըղընը իսպաթ իլլէմիչ վէ քէնտիսի հէր նէ գատար ինքեար եօլունա սաբարագ իչի էհալի վէ հէքիմէրին պաթըլ ի-թիգատարընա համ իթմէք իսթէմիչ իսէտէ, պու սէօղլունիւ իսպաթ իտէ-ճէք հիչ պիր տէիլ: հիչ պիր շահիտ կէօսթէրէմէյիպ իֆատէսի պօշլագըր-տը հիւքմիւնտէ գալմըչ վէ հալ պու քի քէնտիսինին ըիվայէթ օլունան սուրի հարէքեաթընա ճէսարէթ իլլէտիյի արթըգ կիւն կիպի աչիքեարէ չըգմըչ օլտըղընտան, ճէզա գանուէնամէսինին ֆասըլ մախուսընտա մուհարէր* *ին. ճիմատտէնին ֆըգրաի ախիլէսի հիւք-միւնճէ, քէնտիսինին սիւրկիւն ճէզա-սընա շարըլմասը . . .

Պու սըրատա ինֆլուէնցա միւտ-տաիի ումուլիյէ պիր ազ շիտտէթլիճէ պագմըչ օլտըղընտան, պիչարէ ատամ սէօղլունիւ իքմայէ մէյտան պուլմագ-տան էվվէլ տիլլէրինին պաղը չէօղլէ-լէրէք, թիր թիր թիրթէրէք օլտըղը եէրտէ եըզըլտըղը կիպի, մահքէմէ ազասընըն պիր իքիսի տէ տէրագապ

ինֆլուէնցայա թութըլարագ, թիթ-րէմէյէ, իւչիւմէյէ, էօքսիւրմէյէ վէ րէիս տախի շիտտէթլի պիր պաչ աղ-ընընա թութըլտըղընտան, մուհաքէ-մէնին տէվամը հասպ էլ մէճպուրիյէ պաչգա տէֆայա պըրագըլմը տըր քի. կէլէճէք Նիւսիսէմիզտէ նէչըինէ պաչ-լայաճաղըգ:

Վիճակը ՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵ

(Նոտիք Բուէն)

—Շնորհակալ մի ինիք ինձ, օրի-նորգ, ես ձեռնէ աւելի երջանիկ եմ, որովհետեւ իրցայ ձեզ փոքր ծառա-յութիւն մը մատուցանել:

Եւ որովհետեւ նոյն վայրկենին գեանին վրայ օրիորդին քով ծալլուած Թուղթի կտոր մը նշմարած էր, գե-տինը խոնարհեցաւ, վեր աւաւ և օ-րիորդին տալով:

—Բան մը կորսնցուցած էք, ըսաւ.

—Ա՛հ, վիճակահանութեան տոմ-սըս, այս անգամ եւս, շնորհակալ եմ ձեզ . . .

—Օ՛հ, դուք վիճակահանութեան տոմսեր կառնուք, ուրեմն շատ բաղ-գաւոր էք, կը հաւատա՞ք այդպիսի բաներու:

—Ինչո՞ւ չէ . . .

—Ե՞ս, ընդհակառակն, չեմ հա-ւատար բաղդին, բայց թողէք որ մի-ջոցներն ալ կը պակօին . . .

—Ի՞նչ կրսէք. շարունակեց կազ-րիէլ, շահագրգիռ ձեւով մը, դըժ-բա՛ղդ էք:

—Դժբաղդն ալ խօսք է, ընկերա-յին վիճակ մը փնտռելու հետամուտ եմ և չեմ գտնե՛ր . . .

Այն ատեն վստահ լինելով թէ, օ-րիորդը պիտի հասկնար, երիտասար-դը պատմեց իւր կեանքը:

Առանձին մնացած էր Փարիզու մէջ, ընտանեզուրկ, առանց բարեկամի և անպաշտօն: Երեւան կը հանէր իւր դժբաղդութիւնն, իր կենաց անյու-սութիւնն, այսպէս ընկերութեան դէմ տեսակ մը ատելութիւն գոյ-ցնելով:

Դեռատի աղջիկը խորապէս յուզ եայ էր այդ տխուր և ճշմարիտ պատ-մութեան հանդէպ որ այնքան կը նը-մանէր իրենին:

Այն ատեն ինք եւս պատմեց նմա

իւր կեանքը, բայց աւելի զգուշու-
թեամբ:

Ինք եւս առանձինն կապրէր, ա-
ռանց ծնողաց, առանց բարեկամի:
Երկու ծերունի թղթավաճառներ կը
ճանաչէր որք կը բնակէին Սիւրէնզի
մէջ:

Այդ բարի մարդիկ ճանաչած էին
իր ծնողքը, գործոյ մէջ, երբ ինք այն
ատեն երջանիկ աղջիկ մ'էր: Գործէ
քաջուած թղթավաճառներ էին և զինք
իրենց խնամոց ներքեւ առած էին երբ
որք էր և այնուհետեւ իրենց յաջորդ-
ներուն քով դրած էին զնա:

Այժմ հանգիստ կապրէր, բայց ա-
ռանձին էր, և կեանքը իրեն այնքան
միօրինակ կերեւէր . . .

Ժանի նման ուզածէր ինք եւս մէ-
կուն աջակցութիւնը ունենալ, բաժնեւ
անոր հետ իւր առաւապանքն, իւր ու-
րախութիւններն, վերջապէս իւր կեան-
քը: Եւ խորին հառաչ մը դուրս ելաւ
իւր կուրծքէն:

Շոգեկալը կայարանը հասած էր
իրարու ձեռք սեղմեցին և բաժնուե-
ցան, իրարմէ գոհ մնացած և անչափս
մխիթարուած:

Հինգ կամ վեց օր վերջ, Ժաննա-
մակ մ'ստացաւ օրիորդէն, երբ ինք
այլ եւս անոր վրայ մտածելէ դադ-
րած էր:

Ինք շատ նամակ չէր ընդուներ,
որչափ մեծ եղաւ իւր յուզումը, իւր
զարմացումն երբ հետեւեալը կար-
գաց:

«Պարոն»

«Տարակոյս չունիմ թէ՛ մոռցած
էք զիս, բայց ե՛ս ձեր յիշատակը մըտ-
քէս չեմ հանած, որովհետեւ ձեզ կը
պարտիմ այն երջանկութիւնը որուն
արժանի կը լինիմ այսօր:

Արդարեւ դուք չը յանձնեցիք ինձ
այն վիճակահանութեան ատմը զոր
կորսնցուցած էի շոգեկալուն մէջ:
Կրնա՞ք գիտնալ թէ՛ ի՞նչ կարժէ հի-
մա թուղթի այդ ջնջին կտորը:

«Յիսուն հազար ֆրանք միայն մեծ
չահը՝ որ այսօր ինձ կը վերաբերի,
ինձ և . . . բայց չեմ գիտեր թէ՛ ինչ-
պէս ըսեմ:

«Կուզեմ անկից բաժին մը հանել
. . . վերջապէս, եկէ՛ք զիս տեսնել, եր-
ջանիկ պիտի զգամ զիս եթէ անձամբ
չնորհակալութիւններս յայտնեմ ձեզ:

«Աւելին չեմ համարձակիր ըսել և
կը խնդրեմ որ ներողամիտ գտնուիք
յանդգնութեանս . . .

«ԿԱՎՐԻՔԷՆ . . .»

Անմիջապէս Ժան հագուեցաւ և
մեկնեցաւ: Իւր աչերուն առջեւ կը
փայլէր թիւ մը, միշտ նոյն թիւը,
50,000 ֆրանքն: . . . Փողոցին մէջ ե-
րբերաւով կը քայլէր. վերջապէս հասաւ
Կավրիէի տունը:

Կրնա՞ք գուշակել թէ՛ ինչ եղաւ
խօսակցութեան նիւթը երբ գիտնաք
թէ երեք ամիս վերջ, Ժան կամուս-
նանար Կավրիէի հետ և այսօր երկու
թղթավաճառատէրներ են ք. . . փո-
ղոցին մէջ:

Ժան ըսաւ թէ ամուսնութիւնը վի-
ճակահանութիւն մ'է, և մեծ բաժինը
չահելու ապահովագոյն միջոցը թիւը
չառնուլն է:

(Թարգմ.)

Հանրէ Ժերմէ

Մ. Գ. ՄՕՁԵԱՆ

ԱՄՈՒՍՆԱՑԵԼՈՑ ԱՐՈՒԵՍԱՀԱՆԴԵՍԸ

Անցեալ օր գործով մը Հայ կա-
թոլիկաց Պատրիարքարանը գացած
լինելով նոյն օրը Դատաս, խորհրդոյ
գումարման օրն իսկ ինչեւուն ականա-
տես եղանք հետեւեալ խնդիրներով
Պատրիարքարան ներկայացած բազ-
մութեան մը:

Աղջիկ մը գլխէ հանողներն ալ,
աղջիկը մէկուն գլուխը հանել ուզող-
ներն ալ:

Երկու կնիկ առնողները, չորս էրիկ
ունեցողները:

Մէկ հատը քիչ կուգայ կոր պօ-
ռացողները, մէկն ալ շատ է տրտուա-
ցողները:

Իրար աչք աչքի չուզողները, իրա-
րու վրայ հոգի տուողները: Որը պըտ-
խընուլթէնէն, որը նախանձութենէն:

Գոհունիներն ու դժգոհներն ալ,
պարզամիտներն ու ֆէլէկի չէմպէրէն
աթիւամիջ ընողներն ալ:

Գիտովութեամբ կամ բարկութեամբ
խալթ մ'էր ըրինք ըսողներն ալ:

Հաց մը, մոմ մը իրիկունները հե-
տերին բերողները և կամ մութ տեղը
քեօր կինով ձեռքերէն շունչերուն
խաբարըմիջ ընողներն ալ:

Կնկանը թրախուժման ուտել հատ-
ցունելէն վերջը՝ քիչ մ'ալ մօրդ տունը

գնա՛ նոտէ, եսպանճի տեղ չէ՛ ես
ըող կիւնտէլիքնի էրիկմարդերն ալ:

Բէնճիրէները՝ գրացիներու հետ
խօսակցութենէ գլուխ առած չըլլալուն
համար փորը լեցուած հաւերը թա-
խըմիկով կատուին գողցնող տանտիկին
կնիկներն ալ:

Դուլսինին բէնճիրէէն դուրս ան-
գամ չհանող խպնտ, անկոտ նոր
հարսերն ալ:

Ծառք պագի գաց . . . չըլլալուն
համար դատաստանի քաջուող նոր
փեսայները:

Վարժարաններու մէջ ուսմունքնին
կատարելագործած, ու մէյմէկ կոպիտ
ու տխմար մարդոց դէմը ելած ըլլալով՝
այս ի՞նչ փորձանքի հանդիպեցանք
դերասանուհիներու պէս ի խորոց սըր-
տէ հառաչող գիտնական օրիորդները:
Խեղճ եսասխճիներուն բերաննին
բաց ասդին անդին վազելները:

Եւ վէքիլ հայր սուրբին մէկուն
այո՛, միւսին ո՛չ ըսելով, մեծ դժուա-
րութեամբ շատերը համոզելով՝ հաշ-
տեցնելը և ոմանց ալ խստութեամբ
ու յանդիմանութեամբ վռնտելը, որուն
Դատաս, խորհրդոյ Պատ. անդամոց և
խեղճ եսասխճիներուն Աստուած կա-
րողութիւն տայ:

ԱՁԴ

Չալըքեան Պողոս էֆէնտի էճգա-
հանէսի մուգատտէմ Համիտիէ թիւր-
պէտինին սըրառնտա 38 նումէրօլու
տիւքքեանտա իքէն, պու տէֆա թիւրն
պէի մէղքիւր գարչըսնտա ղէպիլի-
եանընտա 21 նումօրօ իլէ մուրագգամ
տիւքքեանա նագլ իտիլմիջ օլտուղուն,
տան բաղպէթլու միւշտէրիլէրինէ իլան
օլունուր:

Մէջ զանաւորան և շտաբան լապայի և այլ
նիւնոց: Աւտո համա՛ Բէ- 16 Կ: Ե՛
Բէ՛Բէ՛Կէ՛Կէ՛

ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
Յ: ՉԱԽՄՁԵԱՆ

Պատիւ ունի ծանուցանել Արգոյ
հասարակութեան թէ իւր վաճառա-
տան մէջ կը շինուին և կը նօրողուին,
կտորած, վնասուած, աւրուած եւրո-
պական ամէն տեսակ գործիք: Ընչ-
պէս կազի կամ իւղի լամպաներ, աշ-
տանակներ: անկողնարանք, չիրինկա-
ներ, տուշեր, սամափարներ և յախ-
ճապակեայ կտորած որ և է նիւթեր,
ըստ ամենայնի մաքուր, վայելուչ և նօ-
րէն աւելի հաստատուն:

Նաեւ, սոյն վաճառատան մէջ կը գտնուին, եւրոպական ընտիր լամպաներ, աշտանակներ ընտիր տպակի խողովակներ որոց համար հասարակութիւնը միշտ կը գանգատի թէ չկան աստ կլօպներ և ամէն տեսակ պարոյկներ, մէկ խօսքով, լանպայի վերաբերեալ ամեն բան, ինչպէս նաեւ պանեօ և չինկոյէ լուսարարաններ և տուչ ընելու համար պէտք եղած ամէն կերպ գործիք:

Գիները յոյժ չափաւոր են. զի մեր գործարանի սկզբունքն է ճշգրտութիւն եւ ՀԱՒԱՅԱՐՄՈՒԹԻՒՆ:

***—Փորձով գիտեմք և բնաւ տարակոյս չունիմք թէ յիշեալ ճարտարարուեստ ազգայնոյն գործերէն մեծապէս գոհ պիտի ըլլան մեր ազգայինք, և այլ եւս իւրեանց այս կարգի պէտքերն հոգայու համար սիրայօժար պիտի գիմեն նոյն վաճառատուն և գործարանը, փոխանակ այլ տեղեր յաճախելու, մինչ սա փտահալութեան ամէն պայման կ'ընծայէ իւր յաճախորդաց:

Օ՛ն ուրեմն, գիմեցէք անդ և փորձեցէք:

ԱՐՏՕՆԱՏԷՐ ԵՒ ՏՆՕՐԷՆ
ԱՆՏՕՆ ՍԱՔԱՅԱՆ

ԽՄԲԱԳԻՐ Մ. ԳՈՓՈՄԱՃՆԱՆ

Փ Օ Ր Թ Ո Ւ Ն Ա

ԱՆՕՆԻՄ ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ
ԳՈՒՄԲԱՆԵԱՍՐ

1686 րէ ՊԵՐՆԻՒԵ ԲԵՒՆԻՍ օլունմուշ րոբ.
ՍԷՐՄԱՅԷ 1,875,000 ՁՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 1,337,500

Տէրաստէթ բիւզաւրնտա պիրլէշմիշ օտն իշպու սիկուրթա գումբանեալարը. քէֆալէթի միւթէգ ապրիլէ իլէ հէր նէվի էմթասա վէ ազչէ կրուբոյարընը, տէ՛րիդ, նէհր վէ գա ա նագլիեաթը թէհլիք լէրինէ գարշը զայէթլէ Փա երտէպալիս շէրտիթ իլէ սիկուրթա իտէրլէր:

ՏԻՒՍԷԼՏՐՓԷՐ

ՏԷՆԻՁ, ՆԷՀՐ ՎԷ ԳԱՐԱ
ՈՒՄՈՒՄԻ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՐ

1845ՏԷՆԷԼՏՐՓԷՐ ԲԵՒՆԻՍ օլունմուշ րոբ.
ՍԷՐՄԱՅԷ 3,750,000 ՁՐԱՆԳ

ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 3,099,367. 15 ՁՐ

Հ Ա Ն Ջ Է Ա Թ Ի Շ Է

ԵԱՆՂԸՆԱ ԳԱՐՇԸ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍՐ

1874րէ Հագոսիլիս ԲԵՒՆԻՍ օլունմուշ րոբ.

ՍԷՐՄԱՅԷ 3,750,000 ՁՐԱՆԳ
ԻՀԹԻԵԱԹ ԱԳՃԷՍԻ 600,000

Իշպու սիկուրթա գումբանեալար, հէր նէվի էմլաք վէ էշեաեր, անպար վէ մաղաղա աէրունլէրինաէքի էմթասաեր, էն զինաստ Փաեիտլապալաշ շարթլար իլէ սիկուրթա իտէր: Թափիլիի մալիւմաթ ալմազ իսթէէնլէր, պալէատէ դիքը օլունման իւշ գումբանեալարըն ումու մի մասլահաթ կիւզարը պոլունան իսթանապոլտա Պահչի-Գարուսունտա Բաիմ բաշա խանրնտա նիւմէրօ 13 վէ 14 տէ ՏԻՐԱՆ Ս. ՄԱՆՈՒԿԵԱՆ ԷՓԷՆ-տիեէ միւրաճաաթ իթմէլէ տալէթ օլունմ:

րել իր հայրիկը: Չատուինք, զատուինք, բայց առանց աղմուկի, առանց գալթակղուլթեան, որպէս սովոր են ընել բարեկիրթ անձինք: Գուք կուզէք որ կին մը էրիկ մարդոց առանձնաշընորհումներն ունենայ, և չէք հասկնար որ կինն աւելի երջանիկ է իր էրկան հնազանդ գտնուելով, քան ամուսնացայ այն յուսով թէ երջանիկ կեանք մը պիտի վարեմ, և խաղաղութիւն վայելեմ ընտանեացս մէջ: Բայց հիմակ կը տեսնեմ որ երկուքնիս ալ խաբուեր ենք: Չատուինք ուրեմն, կը մաղթեմ որ աւելի բարեբաստիկ կենցաղ մը վարէք, և կապահովցունեմ ձեզ թէ չպիտի ջանամ բնաւ խանգարել ձեր կենցաղավարութիւնը:

Այս ըսելէ յետոյ, Ատոյֆ առաւ քալեց. իսկ Սէզաուին զարմացաւ մնաց այն հանդարտութեան և պաղարիւնութեան վրայ, զոր ցոյց տուած էր Ատոյֆ, իմանալով իրենց վերջնական բաժանումը:

Բայց իսկոյն ազատ կենցաղ վարելու գաղափարը նորէն հրահրեց իր երեւակայութիւնն և վաղելով հասաւ Էլվինայի:

—Շուտով պատրաստութիւն տեսիր, երկու օրէն պիտի մեկնինք:

—Ա՛հ, պիտի ճամբորդե՞նք եղբօրս հետ:

չանայ այն: Մէկ առթի մը կը սպասեմ յայտնելու համար Պ. Բանդալունին, թէ մեր մէջ բնաւորութեանց անհամաձայնութիւն կայ և թէ ալ չենք կրնար միատեղ ապրիլ: Եւ այժմէն գիտեմ թէ բնաւ արգելք մը չպիտի զնէ մեր բաժանման առջեւ: Ուրեմն կը պատուիրեմ ձեզ. պատրաստուեցէք:

—Եւ ձեր ամուսնոյն քոյրը:

—Էլվինան, Մեզի հետ պիտի գայ: Ան ալ մեր կարծիքէն է. միայն թէ իրեն իմացուցած չեմ մեր մեկնումն ի Պաէդիներ. վասն զի իր տարիքն ունեցող աղջիկ մը գաղտնիք պահել չգիտեր միշտ:

—Իւ Պ. Ֆուլեա՛գն, զանիկայ ալ պիտի տանինք ի Պաէդիներ:

—Անշուշտ: Պ. Ֆուլեա՛գ մեզ մեծ անձնուիրութիւն ցոյց կուտայ միշտ:

—Այո՛, ասկէց զատ մեզ օգտակար ալ կրնայ ըլլալ, երբոր պէտք ունենանք բանի մը:

Ու տիկնայք իրարմէ բաժնուեցան, Էլվինա լաւ նշմարած էր թէ խորհրդակցութիւններ աւելի կուսնենային Սէզաուինի սենեակին մէջ և թէ չէին հրաւիրեր զինքն այդ խորհրդակցութեանց մասնակցելու. բայց չէր համարձակեր հարցունել Սէզաուինի թէ ինչ որոշումներ կը

ՖՈՒԱՆԳՅՈՐԹՈՒԱԶ

ՏԵՆԻՉ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

Սէ մանէ ֆրանգ 0,250,000 Ինթիեաթ ազչէսի ֆրանգ 1,270,000

Մէզքիւր գումբանիա տէնիզ գազալարընա գարչը վարօրյարտա վէ կէ միլէրտէ եիւլէնիլէն մալլէրի , վէ քէզալիք բոսթա իտարէլէրինէ թէսլիմ օլունան միւճէվէրաթ վէ եախօտ պանգնօթ էվրագը զանէթ էհվէնիեթ վէ սուհուլէթլէ սիկուրթա իտէր :

Պու ճիհէթլէ մէպալիզի քիւլլիեթեի սիկուրթա իտէպիլմէք իչին իչպու գումբանիա էվրօրատա 13 թանէ պիւեիւք սիկուրթա գումբանիալարըյա պիլիէչմիլ տիր : Պոււնլարըն թէքմիլ սէրմանէ վէ ինթիեաթ ազչէսի 100,000,000 ֆրանգը կէչէր :

էքմիլ Թիւրքիա աճէնթէսի

ՀԱՄՊՈՒՐԿ ՄԻՒՆԻՍ ՊԻՐԼԷՇՄԻՇ

ԵԱՆԿԸՆԱ ԳԱՐՇԸ ՍԻԿՈՒՐԹԱ ԳՈՒՄԲԱՆԵԱՍԸ

Սէրմանէ	Ֆրանգ 8,000,000
Ինթիեաթ ազչէսի 1888 Յունիսէ գատար	Ֆրանգ 4,817,262
Սէնէվի իրատ 1888 Յունիսէ գատար	Ֆրանգ 10,069,700

Մէզքիւր գումբանեալար տէրօղլթօյար վէ խանէլէր վէ աւլէր իչինաէ պուլունան մալլէր վէ մօպիլեալարը զանէթ էհվէնիեթ վէ սուհուլէթլէ, թէէմիլնաթը գալիլիեթ թահթընտա օլարագ սիկուրթա իտէրլէր :

Իսթանպօլ աճէնթէսի

Իսթանպօլ, Պահճէ-գարու, Եօրկիատիս խան ԳՍՈՒՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Մ ա ի լ մ ա թ . — Շիր քէթլէրիմիզին Տէրիսատէթ պանքէրլէրի պուլունան ներսէսեան Բէտէր վէ Մախտուժու էֆէնտիլէր՝ հիսապը կէօրիւլմիլչ , վէ միւտիլիեթի ումուլիեթ թարաֆընտան թաստիգ օլունմուչ հէր կիւնա զարար ու զիեանը թագմիլնէ թէմամիլլէ թալիմաթ ախը իլլէմիլչէր տիր :

ԼԱՐՈՒԿՆԷԶ

ՀԻՄՆԵԱԼ 1887

Պրամագուլթու , 4,000,000
 Վեկի ընդարձակ տեղեկութեանց համար ցիմիլի գրուանիա
 Կարգաւորան . Ղարաթիա . Մանսու տիլց վարդ . թիւ 2 , ձեւէմն . Խան , Գաման
 աջի Գանդալիսի ցիմիլի
 Կեդրոնատեղի 18 , Օէն Մաւք վարդ , Բ սիլ
 Վեկի ընդարձակ տեղեկութեանց համար ցիմիլի գրուանիա
 Կարգաւորան . Ղարաթիա . Մանսու տիլց վարդ . թիւ 2 , ձեւէմն . Խան , Գաման
 աջի Գանդալիսի ցիմիլի
 Ընդհանուր գործակալը բովանդակ Թուրքիոյ և Յունաստանի
 ՌիՊՕՆ ԳԱՍՏՈՒՆԵԱՍԸ ԻՒ ԸՆԿ

դառնային իր և համախոհներուն միջեւ .
 Այն միակ առիթն , որում այնքան անձկա-
 նօք կը սպասէր տիկին Բանդալուն , շատ չան-
 ցած ներկայացաւ .

Փոխանակութեան գործակալի երիտասարդ-
 պաշտօնեայ մը , որուն վրայ Ատուլֆ մեծ վըս-
 տահօւթիւն ունէր , և որուն հետ կը խորհըր-
 դակցէր երբ Սակարանին մէջ բան մը գնել ու-
 զեր , առաջարկած էր նմա շահաւոր գործ մը ,
 և Ատուլֆ երեսուն հազար ֆրանք դրած էր
 այս գործին համար :

Բայց գործակալը՝ որում վստահած էր Ա-
 տուլֆ իր դրամն՝ կծիկը դրած էր առտու մը ,
 և երեսուն հազար ֆրանքը միասին տարած :
 Երբոր Սէզաուրն այս լուրն լսեցաւ , իս-
 կոյն երկանը քով վազից , և իրեն յատուկ ձե-
 ւով մը ըսաւ .

— Պարոն , լուր մը ունի՞ք Պ. Տիւրիմառէն ,
 որուն վրայ այնքան վստահութիւն ունիք :

— Ինչո՞ւ կը հարցունէք :
 — Եթէ չունիք , ես ձեզի ազուր լուր մը
 տամ պիտի . այդ պարոնն , զոր այնքան լա-
 պատուած էիք և որում երեսուն հազար ֆը-
 րանք յանձնած էիք , կծիկը դրեր վախեր է ,
 իր հետ տանելով ձեզմէ շորթած դրամը :

— Գիտեմ :

— Գիտե՛ք . . . ուրեմն ինչո՞ւ չըսիք ինձ :
 — Ինչ օգուտ ունի .

— Ինչ օգուտ ունի . . . այսինքն ըսել կու-
 զէք թէ ձեր հարստութիւնը ցիր ու ցան պի-
 տի ընէք , փճացունէք և ես ատոնցմէ անտեղ-
 եակ պիտի մնամ : Ա՛հ , ալ չափը անցաւ : Պէտք
 է վերջ մը տալ այս ամեհուն : Այ չեմ կրնար
 կենակցիլ այնպիսի մարդու մը հետ , որ չի
 կրնար ո՛չ դատ մը վաստիլիլ և ո՛չ ալ իր ստա-
 կը գործածել : Բաժնուելու ենք , պարոն ,
 բաժնուելու ենք .

— Է՛հ , տիկին . ես ալ ատկէց աւելին չեմ
 ուզեր , գուք իրաւունք չունիք զիս մեղադ-
 րելու այս գործին համար . վասն զի այս կո-
 ռուտոր ձեզ չի վերաբերի . կորսնցուցած յու-
 տակս ձերը չէ . իմս է : Մեր ամուսնութեան
 թուականէն ի վեր , բնաւ ձեռք դպցուցած
 չեմ ձեր դրամօժիտին , արդէն ձեռք դպցու-
 նելու պէտք ալ չեմ ունեցած : Ուրեմն , առէք
 ձեր դրամներն , որ տակաւին անեղծ կը մը-
 նայ նստարին քով և զոր ձեզ վերադարձունե-
 լուս անհունս ուրախ եմ : Իմ ունեցածս ինձ
 կ'օգտէ , երբ մինակ ապրիմ : Կուզէք աղջիկիկդ
 ալ ձեր քով պահել , այնպէս չէ՞ , լաւ , ատոր
 ալ կը համակերպիմ . բայց կը յուսամ որ պիտի
 թողլ տաք նմա մերթ ընդ մերթ գալ համբու-